# Ռափայել Պատկանյան

## Օտար օրիորդ և հայ պատանի

Օտարուհին ինձ ասաց. «Հե՞ր ես լալիս, արցունքը
Հեղեղի պես ինչո՞ւ են ոռոգում քու աչքունքը,
Քու տըրտմության ճար ունիմ, կըփարատեմ քու դարդը,
Թըշիս վըրա չե՞ս տեսնում փայլած շուշանն ու վարդը»:

Ջուր մի՛ ջանար, սիրական, իմ դարդը չես փարատիլ,
Հոգիս հոգսից, ցավերից չես փըրկիլ, չես ազատիլ.
Թո՛ղ իմ աչքից հեղեղա արտասունքի աղբյուրը,
Արտասունքն է լըվանում սըրտի խոր–խոր ցավերը:

Օտարուհին ինձ ասաց. «Տե՛ս, հասել է գարունը,

Դաշտերի մեջ բացվել են հազարերանգ ծաղկունքը,
Իջնենք դաշտը, օդ քաշենք, ծաղկունք քաղե՛, փունջ փընջե՛,
Հայրենիքիդ կարոտն ա՛ռ, որ թախիծ քեզ չի տանջե»:

Հայրենիքիս կարոտը ձեր դաշտիցը չեմ առնիլ,
Սառ Հյուսիսում՝ երկինքը Հայաստանի չեմ տեսնիլ,

Ուր բյուր պատիկ ցոլուն են արեգակի շողերը,
Կենսատու է անձրևը, մեղրածին են ցողերը:

Օտարուհին ինձ ասաց. «Մոռացի՛ր քու հայրենիք,

Քու հայրենին այնտեղ է, ուր սիրում են քեզ մարդիկ.
Տե՛ս արևին, նա պայծառ չէ՞ շողշողում Հյուսիսում.

Հայաստանը կորել է, խե՜ղճ, դու ցընորք ես ուզում»:

Սուտ են, սուտ քո զրույցքը, Հայաստանը չէ՛ կորած,
Նա այնտեղ է, ուր Եփրատ ու Տիգրիսն են գրրկված,
Ուր Երասխը մրրմունջով հուզած ջուրն է գրլորում:
Ուր Մասիսի գագաթը ամպերից ցած է նայում,

Ուր փայլում է արեգը իր կուսական շողերով,
Ուր ջրրում է երկինքը երկիրն զով ցողերով,
Ուր որ չի կա բորեաս, չիկա շիմուն ու խորշակ,
Օդը շունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ...
Հայաստանը կա՛... ավա՜ղ, խոպանացած, ամայի,

Եվ կրծաղկի, երբ նորից ծրծե քրրտինքը Հայի...
Նորա ստինքը համառ է, չի կերակրում օտարին,
Օտարն խաբված ասում է «շիջավ աստղը հայերին»:
Բայց ի՞նչ, դու չես հասկանալ իմ սրրտամաշ դարդերը.
Մի՛ ջանար, ինձ չեն սփոփիլ թրշիդ փայլուն վարդերը:

Իմ տրրտմության ցավակից խանդաղակաթ գրրկելով,
Օտարուհին ինձ տվեց գավաթը լի գինիով.
Երկնակապույտ աչերը անթարթ աչերիս հառած,
Լաց ու ժրպիտ երեսին՝ նա մեղմ ձենով ինձ ասաց.
«Խրմե՛ գինի, պատանի, ի հիշատակ այն երկրին,

Որ սրրտամաշ կարոտով կոչում ես քու հայրենին.
Պարզե՛ ազնիվ ճակատրդ, զրվարթացի՛ր, ոգի առ,
Հուսակրտուր այդ դեմքով խրղճալի մի՛ ձևանար.
Ձյունաթաղ ու կիսամեռ դաշտքը գարնային շընչից
Չե՞ն ըսթափում և հառնում մահահանգույն խոր քրնից.

Երբ ծագում է արևը՝ մրոայլը չի՞ հալածվում,
Մեռած բնությունն դեպի նոր կյանք նա չի՞ վերածում,
Դե՛հ, պատանի, քա՛ջ եղիր, խրմե՛ գինի, երգ երգե՛,
Տերն է որբոց օգնական, նա քու ազգրն էլ կրփրրկե»:

## ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ ԵՐԳՈՒՄ Է

Հայկ ու Լևոնին մոռանանք, եղբարք,

Թափ տանք մեզանից փոշին հընության,
Վերածնենք մեր մեջ նոր կյանք ու նոր բարք,
Կեցցե՛ շատ օրեր մանուկ-Հայաստան:

Կեցցե՛ շատ օրեր մանուկ-Հայաստան,
Նա, որ դեռ միայն մեր սրրտի խորքում

Ունի յուր հիմքը, ո՛չ տուն, ո՛չ կայան
Չունի տակավին բուն Հայաստանում:

Եղբա՛րք, բանը դեռ անշոշափելի
Այժմուս մեր մրտքին՝ ցրնորք չի կարծենք,
Բանը կմարմնանա ու տեսանելի

Կը լինի շուտ, միայն մենք վրստահ լինենք:

Մեր հույսը միայն մեր վրրա լինի,
Չեն պետք մեզ նրպաստ մեծատուններին,
Ողորմությամբ թո՛ղ մուրացիկն ապրի,
Մուրացողրն միշտ ստրուկ է օտարին:

Կեցցե՛ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն. իրոք չէ՛ այդպես,
Մեր հայրենին դեռ չէ՛ չվառական,
Քանի որ ունի քաջ որդիք մեզ պես:

Բա՛վ է, օտարին շատ ծառայեցինք,

Ըստրկի վիճակն չէ՛ հավերժական,
Ազատության գինն մենք քաջ սերտեցինք,
Էլ չենք հավատալ օտարի խոստման:

Օտարի շահը թույն է մահաբեր,
Աչք է կուրացնում, միտք է պըղտորում,

Գերի է դարձնում մարդ ազատասեր,
Ոսկի ջըղթայով ձեռք ոտք է կապում:

Կըփըշրեմ շըղթաս, կերթամ Հայաստան,
Կըպագնեմ նորա հողը անարատ,
Կասեմ. «Եկել եմ որդիդ չվառական,

Գըրկիդ մեջ ինձ ա՛ռ, մայր իմ հարազատ:

Չունիմ ես ոսկի, այլ ոսկու մադան,
Ջըլոտ ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր,
Ձեռքումըս ունիմ բահ ու հըրացան,
Սըրտումըս ունիմ ազնիվ խորհուրդներ:

Քու հողն արգավանդ, ես մըշակ արի,
Մենք հաշտ կու ապրինք շատ ու շատ տարի.

Ուրջուներեդ քեզ ոչինչ շահ չրկա,
Թո՛ւյլ տուր, որ բրոնի հալածեմ նոցա:

Դու որդիք ունիս չորս միլիոն ու կես,

Թե հանկարծ գաղթեն՝ նոցա տեղ ունե՞ս,
Ըստինքիդ կաթը խնայե՛ օտարեն,
Գալու որդիքրդ քաղցած, ծարավ են...»:

Հարավ, հյուսիսեն փոշի վերացավ...
Ձայն, տրոփ, խոսք, շըշուկ զիլ-զիլ լըսվեցավ...

Մասսա ճակատեն մեգը հեռացավ...
Մանուկ-Հայաստանն ոտքի կայնեցավ...